Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն   Ե Վ   Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն   Կ Ե Ն Տ Ր Ո Ն

# 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

**Սիրելի՛ աշակերտ**

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

**Ցանկանում ենք հաջողություն:**

1 **Նկար 1-ում հորիզոնի ո՞ր ուղղությունն է նշված Ա տառով:**

1) հյուսիսարևմտյան
2) հարավարևելյան
3) հարավարևմտյան
4) հյուսիսարևելյան




նկ.1

2 **Քարտեզի վրա 1 սմ-ին համապատասխանում է 3 կմ-ը տեղանքում: Որքա՞ն է մասշտաբը:**

1) 1: 3000
2) 1: 30000
3) 1: 300000
4) 1: 3000000

3 **Ստորև թվարկվածներից ո՞րն է հրաբխային ապար:**

1) կավիճ
2) բազալտ
3) մարմար
4) կրաքար

4 **Ինչպե՞ս է կոչվում գետ ջրի մակարդակի հանկարծակի բարձրացումը, որի արդյունքում գետը կարող է ավիրածություններ պատճառել ափամերձ տարածքներին:**

1) վարարում
2) ճահճացում
3) հորդացում
4) բարձրացում

**5** **Ինչպե՞ս է կոչվում քամու տեսակը, որն առաջանում է Աֆրիկայի արևադարձային գոտում ու անընդհատ փչում է դեպի հասարակած:**

1) տոռնադո
2) պասսատ
3) խորշակ
4) թայֆուն

**6** **Ո՞ր կենդանին է ապրում Աֆրիկայում:**

1) կենգուրու
2) զեբրաձի
3) լամա
4) բիզոն

**7** **Քարտեզի 1-ի վրա Զ տառով ո՞ր պետությունն է նշված:**

1) Օման
2) Իրան
3) Եմեն
4) Իրաք

քարտեզ 1



8 Քարտեզի 1-ի վրա ո՞ր տառով է նշված Պակիստանը:

1) Զ
2) Ե
3) Է
4) Ը

9 Ստորև նշվածներից ո՞ր պետության մայրաքաղաքն է Ջակարտան:

1) Իսլանդիա
2) Պակիստան
3) Ինդոնեզիա
4) Աֆղանստան

10 Ստորև նշվածներից ո՞ր պետությունն է գտնվում Հարավային Ամերիկայում:

1) Կանադա
2) Արգենտինա
3) Նիգերիա
4) Ֆինլանդիա

11 Ո՞ր կրոնն է գերիշխող Թուրքմենստանում:

1) կոնֆուցիականություն
2) հինդուականություն
3) քրիստոնեություն
4) մահմեդականություն

12 Ինչպե՞ս են կոչվում Մեքսիկայի բնակիչների նախնիները:

1) մետիս
2) մուլատ
3) սամբո
4) ացտեկ

| 13 | Ո՞ր մշակաբույսի արտահանմամբ է Իտալիան զբաղեցնում առաջին տեղն աշխարհում: |
|---|---|

1) բրինձ
2) ցորեն
3) սուրճ
4) խաղող

| 14 | Ո՞ր տարածաշրջանում է գտնվում Հունգարիան: |
|---|---|

1) Հյուսիսային Եվրոպա
2) Հարավային Եվրոպա
3) Արևմտյան Եվրոպա
4) Արևելյան Եվրոպա

| 15 | Ո՞ր տարածաշրջանում է գտնվում Անգոլան: |
|---|---|

1) Հարավային Ասիա
2) Հարավային Աֆրիկա
3) Լատինական Ամերիկա
4) Արևելյան Եվրոպա

| 16 | Ո՞ր պետության մայրաքաղաքն է Կահիրեն: |
|---|---|

1) Եգիպտոս
2) Թունիս
3) Թուրքիա
4) Ալժիր

| 17 | Ո՞ր մշակաբույսի հայրենիքն է Հայաստանը: |
|---|---|

1) սուրճ
2) կարտոֆիլ
3) բրինձ
4) ցորեն

**18** **Ո՞ր պետության տարածքն է ամենամեծը:**

1) Պորտուգալիա
2) Իրաք
3) Բրազիլիա
4) Իրան

**19** **Ո՞ր աշխարհամասն է ամենաշատը մշակում եգիպտացորեն:**

1) Ասիա
2) Եվրոպա
3) Աֆրիկա
4) Ամերիկա

**20** **Ո՞ր պետությունն է ամենահարուստը պղնձով:**

1) ԱՄՆ
2) Ինդոնեզիա
3) ԱՄԷ
4) Թուրքիա